մանակս Վասլի եպիսկոպոսի սակս բաշխման և հաւաքման քաղաքական տրոց ընդ Ասորիս եւ ընդ Դպիթիս, այլ ոչ այնքան կարեւորք։ Ի սմին ժամանակի չինեցաւ վերելից դուռն Ս. Առաքելոցն Պետրոսի և Պօղոսի, 'ի տաճարի Ս. Յակոբայ, յանփուտ փայտէ, 'ի յիշատակ ննջեցելոց հեզահոգի Յովհաննէսի, որպէս ցուցանէ արձանագրութիւնն, 'ի թուին Հայոց՝ ՊԵ. (1356)։

Յայն արարացի Պատմիչն յառաջ բերէ աստանօր, թէ 'ի սմին ժամանակի Պատրիարքն Երուսաղէմի էր Սոփրոնիոս, որ վարեաց զիշխանութիւն իւր ամս 46 ընդ իշխանութեամբ Մեմլուքաց, յորում բնակիչք Պաղեստինայ տառապէին յերեսաց արշաւանաց և աւարառութեանց այլազգեաց, զի Նախարարք եւ Իշխանք Եգիպտոսի երբեմն նշկահելով զՍուլթանս իւրեանց, ինքնագլուխ յառնէին 'ի վերայ իրերաց, և տարածեալ զգէնս իւրեանց մինչեւ 'ի սահմանս Երուսաղէմի, գործէին զմեծամեծ չարիս, ըստոյն առնէին և զօրք Թաթարաց որք նստէին յԱսորիս, աւերելով զերկիրն և կողոպտելով զբնակիչս, և ոչ ոք էր որ ձեւնտու լինէր Երուսաղէմի բառնալ զվերահաս չարիսն, և ընդդէմ կայր աւարառու թշնամեաց, որպէս արարին Դամասկոսի, Բերիոյ, Դաղզէի և Ռէմլէի. եւ զօրօք Սուլթանն Ֆիրուզ յԱսորիս, եւ նուաճեալ զապստամբսն եկն յԵրուսաղէմ, և յետ տարւոյ միոյ յարեաւ 'ի վերայ նորա Չէյխ Մահմուտ՝ մին 'ի դլխաւոր նախարարաց իւրոց, և ընկեցեալ զնա յաթոռոյն, ինքն նստաւ 'ի տեղի նորա, որով սաստկացաւ ատելութիւնն, խռովութիւն և պատերազմն, (1356)։

Աւանդի 'ի ձեռագիր Ճաշոցի 'ի գրատան Ս. Աթոռոյս Երուսաղէմի, այսպէս։ Ի սմին ժամանակի առաւ Աղէքսանդրիա, և քրիստոնեայք աշխարհին Պաղեստինոյ կային 'ի մեծի նեղութեան եւ 'ի տառապանս. փակեցին այլազգիք զդրունս եկեղեցեաց, ընդ որս և զտաճարին Ս. Յարութեան ամս 4. և յընչից քրիստոնէից 'ի չորրորդէն զմի մասն առին. զբաղումս դարձուցին 'ի կրօնս իւրեանց, և զբաղումս սպանին. եւ զմեզ զամենեսեանս ասէ՝ եդին 'ի խաւարչային բանտի. և ազգի ազգի նեղութեամբ չարչարեցին զամս 4։ Զէրեցս, զաբեղայս և զեպիսկոպոսունս երկիցս առեալ տարան 'ի Դաղա. եւ զերկուս արեղայս 'ի